| Առողջական կարիք կամ խնդիր | Ծառայություններ, որոնց կարիքն ունեք թերևս | Ձեր ծախքերը <u>ներցանցային</u> մատակարարների համար | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների տեղեկություն (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Դուք քրոնիկ վիճակ ունեք, ինչպես՝ շաքարախտը կամ սրտի հիվանդությունը** | Ձեր հիվանդությունների կառավարման օգնող ծառայություններ | $0 | Թերևս կիրառելի լինեն ուղեգրի և նախօրոք լիազորման կանոնները: |
| | Շաքարախտի պաշարներ և ծառայություններ | $0 | Շաքարախտի ինքնակառավարման վարժանք:<br>Շաքարախտը հսկելու պաշարներ:<br>Թերապևտիկ կոշիկներ կամ ներդիրներ:<br>Շաքարախտի պաշարներն ու ծառայությունները սահմանափակվում են հատուկ արտադրողներով, արտադրանքներով և/կամ ապրանքանիշերով:<br>Թերևս կիրառելի լինեն ուղեգրի և նախօրոք լիազորման կանոնները: |
| **Դուք հոգեկան առողջության վիճակ ունեք** | Հոգեկան կամ վարքագծային առողջության ծառայություններ | $0 | Անհատական բուժման այց:<br>Խմբային բուժման այց:<br>Անհատական բուժման այց հոգեբույժի մոտ:<br>Խմբային բուժման այց հոգեբույժի մոտ:<br>Մասնակի հիվանդանոցային բուժման ծրագրի ծառայություններ:<br>Թերևս կիրառելի լինեն նախօրոք լիազորման կանոնները: |

**Հարցեր ունենալու դեպքում,** խնդրում ենք զանգահարել Health Net Cal MediConnect՝ 1-855-464-3571 (TTY՝ 711) համարով կ.ա. 8-ից կ.հ. 8-ը, երկուշաբթիից ուրբաթ: Աշխատանքային ժամերից հետո, շաբաթավերջերին և տոնական օրերին կարող եք պատգամ թողնել: Ձեր հեռախոսազանգին կպատասխանենք հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում: **Հավելյալ տեղեկության համար** այցելեք www.healthnet.com/calmediconnect կայքը:

| Առողջական կարիք կամ խնդիր | Ծառայություններ, որոնց կարիքն ունեք թերևս | Ձեր ծախքերը ներցանցային մատակարարների համար | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների տեղեկություն (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Դուք թմրանյութի չարաշահման խնդիր ունեք** | Թմրանյութի չարաշահման ծառայություններ | $0 | **Ստացիոնար հիվանդանոցային խնամք**<br>Ընդգրկում է թմրանյութի չարաշահման և վերականգնումի ծառայությունները:<br><br>Հիվանդանոցում յուրաքանչյուր կեցության համար ապահովագրված օրերի քանակի սահմանափակումներ չկան:<br><br>Բացառությամբ արտակարգ իրավիճակի դեպքերի, Ձեր բժիշկը պետք է տեղեկացնի ծրագրին, որ Ձեզ հիվանդանոց են ընդունելու:<br><br>Թերևս կիրառելի լինեն ուղեգրի և նախօրոք լիազորման կանոնները:<br><br>**Ամբուլատոր դրվածքում թմրանյութի չարաշահման խնամք**<br>Թմրանյութի չարաշահման անհատական ամբուլատոր բուժման այց:<br><br>Թմրանյութի չարաշահման խմբային ամբուլատոր բուժման այց:<br><br>Թերևս կիրառելի լինեն նախօրոք լիազորման կանոնները: |

**Հարցեր ունենալու դեպքում,** խնդրում ենք զանգահարել Health Net Cal MediConnect՝ 1-855-464-3571 (TTY՝ 711) համարով կ.ա. 8-ից կ.հ. 8-ը, երկուշաբթիից ուրբաթ: Աշխատանքային ժամերից հետո, շաբաթավերջերին և տոնական օրերին կարող եք պատգամ թողնել: Ձեր հեռախոսազանգին կպատասխանենք հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում: **Հավելյալ տեղեկության համար** այցելեք www.healthnet.com/calmediconnect կայքը:

| Առողջական կարիք կամ խնդիր | Ծառայություններ, որոնց կարիքն ունեք թերևս | Ձեր ծախքերը ներցանցային մատակարարների համար | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների տեղեկություն (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Ձեզ երկարաժամկետ հոգեկան առողջության ծառայություններ են հարկավոր** | Ստացիոնար խնամք անձանց համար, ովքեր կարիք ունեն հոգեկան առողջության խնամքի | $0 | Ստանում եք մինչև 190 օր ստացիոնար հոգեբուժական հիվանդանոցային խնամք՝ ցկյանս: Ստացիոնար հոգեբուժական հիվանդանոցային ծառայությունները մտնում են ցկյանս 190-օրյա սահմանափակման մեջ՝ որոշակի պայմաններ բավարարելու դեպքում միայն: Սահմանափակումը կիրառելի չէ ստացիոնար հոգեբուժական ծառայությունների համար, որոնք մատուցվում են ընդհանուր հիվանդանոցում:<br><br>Ծրագիրը ապահովագրում է ցկյանս 60 պահեստային օր:<br><br>Բացառությամբ արտակարգ իրավիճակի դեպքերի, Ձեր բժիշկը պետք է տեղեկացնի ծրագրին, որ Ձեզ հիվանդանոց են ընդունելու:<br><br>Թերևս կիրառելի լինեն նախօրոք լիազորման կանոնները:<br><br>**Հոգեկան հիվանդությունների ծառայությունների հաստատություն 65 տարեկան կամ ավելի տարեց մարդկանց համար**<br>Թերևս կիրառելի լինեն ուղեգրի և նախօրոք լիազորման կանոնները:<br><br>Մանրամասնությունների համար կապ հաստատեք ծրագրի հետ: |

# Health Net Cal MediConnect՝ Նպաստների ամփոփում

| Առողջական կարիք կամ խնդիր | Ծառայություններ, որոնց կարիքն ունեք թերևս | Ձեր ծախքերը <u>ներցանցային</u> մատակարարների համար | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների տեղեկություն (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Ձեզ տնական օգտագործման բժշկական սարք (DME) է հարկավոր** | Անվաթոռներ | $0 | Թերևս կիրառելի լինեն ուղեգրի և նախօրոք լիազորման կանոնները:<br>(Նշում՝ Սա ապահովագրված DME-ների կամ պաշարների ամբողջական ցանկ չէ: Մանրամասնությունների համար կապ հաստատեք ծրագրի հետ:) |
| | Հեղուկացրիչ | $0 | |
| | Անթացուպեր | $0 | |
| | Քայլակներ | $0 | |
| | Թթվածնի սարքեր և պաշարներ | $0 | |
| **Ձեզ տանը բնակվելու համար օգնություն է հարկավոր** | Ձեր բնակարանը բերվող ճաշեր | $0 | Թերևս կիրառելի լինեն նախօրոք լիազորման կանոնները:<br>Մանրամասնությունների համար կապ հաստատեք ծրագրի հետ:<br>Այս ծառայությունը միայն Տարեցների բազմանպատակ ծառայությունների ծրագրից (MSSP) հրաժարվելու իրավասու անդամների համար է: Նահանգային իրավասության պահանջմունքներ թերևս կիրառելի լինեն: MSSP-ը ապահովագրվում է տարեկան մինչև $4,285-ով: |
| | Տնային ծառայություններ, ինչպես՝ մաքրություն կամ տնային տնտեսություն | $0 | Թերևս կիրառելի լինեն նախօրոք լիազորման կանոնները:<br>Մանրամասնությունների համար կապ հաստատեք ծրագրի հետ:<br>Տարեցների բազմանպատակ ծառայությունների ծրագից (MSSP) հրաժարվելու- իրավասու անդամների համար: Նահանգային իրավասության պահանջմունքներ թերևս կիրառելի լինեն: MSSP-ը ապահովագրվում է տարեկան մինչև $4,285-ով: |

**Հարցեր ունենալու դեպքում,** խնդրում ենք զանգահարել Health Net Cal MediConnect՝ 1-855-464-3571 (TTY՝ 711) համարով կ.ա. 8-ից կ.հ. 8-ը, երկուշաբթիից ուրբաթ: Աշխատանքային ժամերից հետո, շաբաթավերջերին և տոնական օրերին կարող եք պատգամ թողնել: Ձեր հեռախոսազանգին կպատասխանենք հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում: **Հավելյալ տեղեկության համար** այցելեք www.healthnet.com/calmediconnect կայքը:

| Առողջական կարիք կամ խնդիր | Ծառայություններ, որոնց կարիքն ունեք թերևս | Ձեր ծախքերը <u>ներցանցային</u> մատակարարների համար | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների տեղեկություն (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Ձեզ տանը բնակվելու համար օգնություն է հարկավոր** *(շարունակված)* | Փոփոխություններ Ձեր տանը, ինչպես՝ թեքահարթակներ և անվաթոռի մուտք | $0 | Թերևս կիրառելի լինեն նախօրոք լիազորման կանոնները:<br>Մանրամասնությունների համար կապ հաստատեք ծրագրի հետ:<br>Տարեցների բազմանպատակ ծառայությունների ծրագից (MSSP) հրաժարվելու իրավասու անդամների համար: Նահանգային իրավասության պահանջմունքներ թերևս կիրառելի լինեն: MSSP-ը ապահովագրվում է տարեկան մինչև $4,285-ով: |
| | Տնային առողջապահական խնամքի ծառայություններ | $0 | Թերևս կիրառելի լինեն նախօրոք լիազորման կանոնները:<br>Մանրամասնությունների համար կապ հաստատեք ծրագրի հետ: |

**Հարցեր ունենալու դեպքում,** խնդրում ենք զանգահարել Health Net Cal MediConnect՝ 1-855-464-3571 (TTY՝ 711) համարով կ.ա. 8-ից կ.հ. 8-ը, երկուշաբթիից ուրբաթ: Աշխատանքային ժամերից հետո, շաբաթավերջերին և տոնական օրերին կարող եք պատգամ թողնել: Ձեր հեռախոսազանգին կպատասխանենք հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում: **Հավելյալ տեղեկության համար** այցելեք www.healthnet.com/calmediconnect կայքը:

| Առողջական կարիք կամ խնդիր | Ծառայություններ, որոնց կարիքն ունեք թերևս | Ձեր ծախքերը ներցանցային մատակարարների համար | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների տեղեկություն (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Ձեզ տանը բնակվելու համար օգնություն է հարկավոր Ձեզ** (*շարունակված*) | Ծառայություններ, որ օգնում են Ձեզ ապրել ինքնուրույն | $0 | Թերևս կիրառելի լինեն նախօրոք լիազորման կանոնները:<br>Մանրամասնությունների համար կապ հաստատեք ծրագրի հետ:<br>Չափահասների համայնքային ծառայություններից (CBAS) և Համայնքային Տարեցների բազմանպատակ ծառայությունների ծրագրից (MSSP) հրաժարվելու իրավասու անդամների համար: Նահանգային իրավասության պահանջմունքներ թերևս կիրառելի լինեն: MSSP-ը ապահովագրվում է տարեկան մինչև $4,285-ով: |
| | Չափահասի ցերեկային ծառայություններ կամ այլ աջակից ծառայություններ | $0 | Թերևս կիրառելի լինեն նախօրոք լիազորման կանոնները:<br>Մանրամասնությունների համար կապ հաստատեք ծրագրի հետ:<br>Չափահասների համայնքային ծառայություններին (CBAS) իրավասու անդամների համար:<br>Նահանգային իրավասության պահանջմունքներ թերևս կիրառելի լինեն: |

# Health Net Cal MediConnect՝ Նպաստների ամփոփում

| Առողջական կարիք կամ խնդիր | Ծառայություններ, որոնց կարիքն ունեք թերևս | Ձեր ծախքերը <u>ներցանցային</u> մատակարարների համար | Սահմանափակումներ, բացառություններ և նպաստների տեղեկություն (նպաստների վերաբերյալ կանոններ) |
|---|---|---|---|
| **Ձեզ հարկավոր է մի վայր բնակվելու համար անձանց հետ, ովքեր տրամադրելի են Ձեզ օգնելու համար** | Աջակցված բնակության կամ այլ բնակարանային ծառայություններ | $0 | Թերևս կիրառելի լինեն նախօրոք լիազորման կանոնները:<br><br>Թերևս կիրառելի լինեն ուղեգրի պահանջմունքներ: Մանրամասնությունների համար կապ հաստատեք ծրագրի հետ:<br><br>Ծրագիրը կօգնի համակարգել ծառայությունները, որոնք մատուցվում են այլ կազմակերպությունների միջոցով, ինչպես՝ Անկախ բնակության կենտրոնները կամ այլ ծրագրեր, ինչպես՝ Աջակցված բնակության զանցառման ծրագրերը: Մանրամասնությունների համար կապ հաստատեք ծրագրի հետ: |
| | Ծերանոցի խնամք | $0 | Թերևս կիրառելի լինեն ուղեգրի և նախօրոք լիազորման կանոնները:<br><br>Մանրամասնությունների համար կապ հաստատեք ծրագրի հետ: |
| **Ձեզ խնամողը մի քիչ ազատ ժամանակի կարիք ունի** | Հանգստի խնամք | $0 | Թերևս կիրառելի լինեն նախօրոք լիազորման կանոնները:<br><br>Մանրամասնությունների համար կապ հաստատեք ծրագրի հետ:<br><br>Տարեցների բազմանպատակ ծառայությունների ծրագրից (MSSP) հրաժարվելու իրավասու անդամների համար: Նահանգային իրավասության պահանջմունքներ թերևս կիրառելի լինեն: MSSP-ը ապահովագրվում է տարեկան մինչև $4,285-ով: |

**Հարցեր ունենալու դեպքում,** խնդրում ենք զանգահարել Health Net Cal MediConnect՝ 1-855-464-3571 (TTY՝ 711) համարով կ.ա. 8-ից կ.հ. 8-ը, երկուշաբթիից ուրբաթ: Աշխատանքային ժամերից հետո, շաբաթավերջերին և տոնական օրերին կարող եք պատգամ թողնել: Ձեր հեռախոսազանգին կպատասխանենք հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում: **Հավելյալ տեղեկության համար** այցելեք www.healthnet.com/calmediconnect կայքը:

# Health Net Cal MediConnect՝ Նպաստների ամփոփում

**Health Net Cal MediConnect-ի ապահովագրած ուրիշ ծառայություններ**
Սա ամբողջական ցանկ չէ: Զանգահարեք Անդամների սպասարկում կամ ընթերցեք *Անդամի տեղեկագիրքը* ուրիշ ապահովագրված տեղեկությունների մասին տեղեկանալու համար:

| Health Net Cal MediConnect-ի ապահովագրած ուրիշ ծառայություններ | Ձեր ծախքերը <u>ներցանցային</u> մատակարարների համար |
|---|---|
| **Ոսկրահարդարման ծառայություններ** | $0<br>Ոսկրահարդարման այցերի նպատակն է ձեռքի շարժումներով ողնաշարի ուղղումը՝ դարմանելու ենթահոդախախտումները (տեղաշարժված կամ սխալ տեղադրված հոդ կամ մարմնի որևէ մաս):<br>Թերևս կիրառելի լինեն ուղեգրի և նախօրոք լիազորման կանոնները: |
| **Ասեղնաբուժության ծառայություններ** | $0<br>Մենք կվճարենք առավելագույնը երկու ամբուլատոր ասեղնաբուժական ծառայության համար որևէ օրացուցային ամսվա ընթացքում կամ ավելի հաճախ՝ եթե դրանք բժշկականորեն անհրաժեշտ են: |
| **Ոտնաբուժական ծառայություններ** | $0<br>Ոտնաբուժական ծառայությունները բժշկականորեն անհրաժեշտ ոտքի խնամքի համար են նախատեսված:<br>Ոտքի քննություններ և բուժում՝ եթե ունեք շաքարախտին առնչված նյարդի վնասվածք և/կամ լրացնում եք որոշ պայմաններ:<br>Սովորական ոտքի խնամք (տարեկան առավելագույնը 12 այց):<br>Թերևս կիրառելի լինեն ուղեգրի պահանջմունքներ: |
| **Պրոթեզային սարքեր** | $0<br>Բժշկական պաշարներ, որոնք վերաբերում են պրոթեզների, բեկակալների և ուրիշ սարքերի:<br>Թերևս կիրառելի լինեն նախօրոք լիազորման կանոնները: |
| **Անմիզապահության կրեմ և խանձարուրներ** | $0<br>Թերևս կիրառելի լինեն ուղեգրի և նախօրոք լիազորման կանոնները: |

**Health Net Cal MediConnect-ի ապահովագրած ուրիշ ծառայություններ**
Սա ամբողջական ցանկ չէ: Զանգահարեք Անդամների սպասարկում կամ ընթերցեք *Անդամի տեղեկագիրքը* ուրիշ ապահովագրված տեղեկությունների մասին տեղեկանալու համար:

| Health Net Cal MediConnect-ի ապահովագրած ուրիշ ծառայություններ | Ձեր ծախքերը <u>ներցանցային</u> մատակարարների համար |
|---|---|
| **Երիկամի հիվանդություն և վիճակներ** | $0<br>• Ստացիոնար, ամբուլատոր և տանը մատուցվող դիալիզ: Ծրագիրն ապահովագրում է երիկամի դիալիզի ծառայությունները, երբ կարճ ժամանակով գտնվում եք ծրագրի սպասարկման տարածքից դուրս: Այս ծառայությունները կարող եք ստանալ Medicare-ի կողմից արտոնագրված դիալիզի հաստատությունում:<br>• Երիկամային հիվանդությունների կրթական ծառայություններ:<br>Թերևս կիրառելի լինեն ուղեգրի և նախօրոք լիազորման կանոնները: |
| **Քաջառողջության/Կրթության և այլ լրացուցիչ նպաստներ** | $0<br>Ծրագիրն ապահովագրում է հետևյալ լրացուցիչ կրթական/քաջառողջության ծրագրերը՝<br>• Առողջապահական կրթություն<br>• Սննդառության/սննդակարգային նպաստ<br>• Ծխելու և ծխախոտի դադարեցման խորհրդատվության հավելյալ սեսիաներ<br>Թերևս կիրառելի լինեն նախօրոք լիազորման կանոնները Առողջապահական կրթության, Սննդառության/սննդակարգային նպաստի և Ծխելու և ծխախոտի դադարեցման խորհրդատվության հավելյալ սեսիաների համար<br>• Բուժքույրական թեժ հեռախոսագիծ |

# Health Net Cal MediConnect՝ Նպաստների ամփոփում

**Health Net Cal MediConnect-ի ապահովագրած ուրիշ ծառայություններ**
Սա ամբողջական ցանկ չէ: Զանգահարեք Անդամների սպասարկում կամ ընթերցեք *Անդամի տեղեկագիրքը* ուրիշ ապահովագրված տեղեկությունների մասին տեղեկանալու համար:

| Health Net Cal MediConnect-ի ապահովագրած ուրիշ ծառայություններ | Ձեր ծախքերը <u>ներցանցային</u> մատակարարների համար |
|---|---|
| **Ատամնաբուժական ծառայություններ** | $0<br><br>Որոշ ատամնաբուժական ծառայություններ ապահովագրվում են Denti-Cal-ի ներքո: Health Net Cal MediConnect-ը առաջարկում է հավելյալ ատամնաբուժական նպաստներ: Մանրամասնությունների համար կապ հաստատեք ծրագրի հետ: |
| **Ծխելը դադարեցնելու խորհրդատվություն հղի կանանց համար** | $0<br><br>Թերևս կիրառելի լինեն ուղեգրի և նախօրոք լիազորման կանոնները: |
| **Գործի կառավարում** | $0<br><br>Մանրամասնությունների համար կապ հաստատեք ծրագրի հետ: |
| **Ընտանիքի ծրագրման ծառայություններ** | $0<br><br>Մանրամասնությունների համար կապ հաստատեք ծրագրի հետ: |
| **Դեղադարանից գնվող (OTC) նյութեր** | Ծրագիրն ապահովագրում է մինչև $25 յուրաքանչյուր օրացուցային եռամսյակում OTC նյութերի համար, որոնք տրամադրելի են փոստային պատվերով ծառայության միջոցով: Յուրաքանչյուր եռամսյակի վերջում չօգտագործված հաշվեկշռի իրավունքից կզրկվեք: Հավելյալ մանրամասնությունների համար կապ հաստատեք ծրագրի հետ: |

**?** **Հարցեր ունենալու դեպքում,** խնդրում ենք զանգահարել Health Net Cal MediConnect՝ 1-855-464-3571 (TTY՝ 711) համարով կ.ա. 8-ից կ.h. 8-ը, երկուշաբթիից ուրբաթ: Աշխատանքային ժամերից հետո, շաբաթավերջերին և տոնական օրերին կարող եք պատգամ թողնել: Ձեր հեռախոսազանգին կպատասխանենք հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում: **Հավելյալ տեղեկության համար** այցելեք www.healthnet.com/calmediconnect կայքը:

## Health Net Cal MediConnect-ի ապահովագրած ուրիշ ծառայություններ

Սա ամբողջական ցանկ չէ: Զանգահարեք Անդամների սպասարկում կամ ընթերցեք *Անդամի տեղեկագիրքը* ուրիշ ապահովագրված տեղեկությունների մասին տեղեկանալու համար:

| Health Net Cal MediConnect-ի ապահովագրած ուրիշ ծառայություններ | Ձեր ծախքերը <u>ներցանցային</u> մատակարարների համար |
|---|---|
| **Ծերանոցի բնակչի ծառայություններ** | $0<br>Ծերանոցի բնակիչ՝<br>• Ոսկրահարդարման խնամք և ոտքերի խնամք<br>• Տեսողական և ատամնաբուժական խնամք<br>• Ասեղնաբուժություն<br>• Լսողական քննություններ և լսողական օժանդակ սարքեր<br>Թերևս կիրառելի լինեն նախօրոք լիազորման կանոնները:<br>Մանրամասնությունների համար կապ հաստատեք ծրագրի հետ: |
| **Տարեցների բազմանպատակ ծառայությունների ծրագիր (MSSP)** | $0<br>Թերևս կիրառելի լինեն նախօրոք լիազորման կանոնները:<br>Մանրամասնությունների համար կապ հաստատեք ծրագրի հետ:<br>Ծրագրի ապահովագրության տարեկան $4,285 սահման Տարեցների բազմանպատակ ծառայությունների ծրագրի (MSSP) համար: |

**Health Net Cal MediConnect-ից դուրս ապահովագրված նպաստներ**
Սա ամբողջական ցանկ չէ: Զանգահարեք Անդամների սպասարկում, տեղեկանալու Health Net Cal MediConnect-ի կողմից չապահովագրված, բայց Medicare-ի կամ Medi-Cal-ի միջոցով տրամադրելի ուրիշ ծառայությունների մասին:

| Medicare-ի կամ Medi-Cal-ի կողմից ապահովագրված ուրիշ ծառայություններ | Ձեր ծախքերը |
|---|---|
| **Անբուժելի հիվանդի մի շարք ծառայություններ** | $0 |
| **Կալիֆորնիայի համայնքային անցումների (California Community Transitions, CCT) նախանցումային համակարգման ծառայություններ և հետ-անցումային ծառայություններ** | $0 |
| **Որոշակի ատամնաբուժական ծառայություններ, ներառյալ՝ մաքրությունը, լցոնները և լրիվ ատամնահենքերը** | Medi-Cal-ի Ատամնաբուժական ծրագրի ներքո ապահովագրված ծառայությունների համար գանձում չի կատարվի Ձեզանից: Սակայն Դուք պատասխանատու եք Ձեր ծախսաբաժնի համար՝ այն կիրառելի լինելու դեպքում: Ձեր ծրագրի կամ Medi-Cal-ի կողմից չապահովագրված ծառայությունների դիմաց վճարումը կազմում է Ձեր պատասխանատվությունը: |

**Ծառայություններ, որոնք չեն ապահովագրվում Health Net Cal MediConnect-ի, Medicare-ի և Medi-Cal-ի կողմից:**
Սա ամբողջական ցանկ չէ: Ուրիշ բացառված ծառայությունների մասին իմանալու համար զանգահարեք Անդամների սպասարկում:

| Ծառայություններ, որոնք ապահովագրված չեն Health Net Cal MediConnect-ի, Medicare-ի, կամ Medi-Cal-ի կողմից: |
| --- |
| Medicare-ի և Medi-Cal-ի չափանիշների համաձայն «տրամաբանական և անհրաժեշտ» չնկատվող ծառայություններ, եթե այդ ծառայությունները չեն թվարկվել որպես մեր ծրագրի կողմից ապահովագրված ծառայություններ: |
| Փորձառական բժշկական և վիրահատական բուժումներ, իրեր և դեղեր, եթե չեն ապահովագրվում Medicare-ի կողմից կամ Medicare-ի վավերացրած կլինիկական հետազոտական ուսումնասիրության ներքո կամ մեր ծրագրի կողմից: Փորձառական բուժումն ու պայմանները նրանք են, որոնք բժշկական հանրության կողմից ընդհանուր ընդունելություն չեն գտել: |
| Ընտրովի կամ կամավոր բարելավման գործողություններ կամ ծառայություններ (ներառյալ՝ քաշի կորուստը, մազերի աճը, սեռական կատարողությունը, մարզական կատարողությունը, գեղարարական նպատակները, հակածերացումը և մտավոր կատարողությունը), բացի երբ դրանք բժշկականորեն անհրաժեշտ են: |
| Գեղարարական վիրահատությունը կամ ուրիշ գեղարարական աշխատանք, եթե այն անհրաժեշտ չէ վթարային վնասվածքի պատճառով կամ ճիշտ չձևավորված մարմնի ինչ-որ մասի բարելավման համար: Սակայն ծրագիրը կվճարի ստինքի հեռացումից հետո կրծքի վերականգնման և մյուս կուրծքը նրան համապատասխանեցնելու նպատակով: |
| Ամլացման հակադարձման  գործողություններ և ոչ-դեղատոմսային հակաբեղմնավորիչ պաշարներ: |

## Որպես ծրագրի անդամ Ձեր իրավունքները

Որպես Health Net Cal MediConnect-ի անդամ, Դուք ունեք որոշ իրավունքներ: Դուք այս իրավունքները կարող եք կիրառել առանց պատժի ենթարկվելու: Կարող եք նաև այս իրավունքներն օգտագործել առանց կորցնելու Ձեր առողջական խնամքի ծառայությունները: Մենք Ձեզ տարին առնվազն մի անգամ կասենք Ձեր իրավունքները: Ձեր իրավունքների վերաբերյալ հավելյալ տեղեկության համար խնդրում ենք ընթերցել *Անդամի տեղեկագիրքը*: Ձեր իրավունքներն ընդգրկում են հետևյալները, առանց սահմանափակվելու նրանցով

- **Իրավունք ունեք հարգվելու, արդար վերաբերումի և արժանապատվության:** Սա ընդգրկում է իրավունքը՝
  - Ապահովագրված ծառայություններն ստանալու առանց ցեղի, ազգության, ազգային ծագումի, կրոնի, սեռի, տարիքի, հոգեկան կամ մարմնական հաշմանդամության, սեռական հակումի, գենետիկական տեղեկության, վճարելու կարողության կամ անգլերեն խոսելու կարողության մասին մտահոգության:
  - Տեղեկությունները ստանալու տարբեր ձևաչափերով (օրինակ՝ խոշոր տառերով, Բրայլյան այբուբենով և/կամ ձայնագրված):
  - Ազատ մնալու որևէ կաշկանդանքից կամ առանձնացումից:
  - Ցանցի մատակարարների կողմից հաշիվ չստանալու:
  - Ձեր հարցերի և մտահոգությունների պատասխաններն ստանալու ամբողջականորեն և քաղաքավարությամբ:
- **Իրավունք ունեք տեղեկություն ստանալու Ձեր առողջական խնամքի վերաբերյալ:** Սա ընդգրկում է տեղեկությունը Ձեր բուժման և բուժման ընտրանքների վերաբերյալ: Այս տեղեկությունը պետք է լինի Ձեզ հասկանալի ձևաչափով: Այս իրավունքներն ընդգրկում են տեղեկություն ստանալը՝
  - Մեր ապահովագրած ծառայությունների նկարագրության մասին:
  - Ծառայություններն ինչպես ստանալու մասին:
  - Ծառայությունների գնի մասին:
  - Առողջական խնամքի մատակարարների և խնամքի կառավարիչների անունների մասին:
- **Իրավունք ունեք որոշումներ կայացնելու Ձեր խնամքի վերաբերյալ, ներառած՝ բուժման մերժումը:** Սա ընդգրկում է իրավունքը՝
  - Ընտրելու մի Առաջնային խնամքի մատակարար (PCP) և Ձեր PCP-ը փոխելու ցանկացած ժամանակ:
  - Կանանց առողջական խնամքի մատակարարի այցելելու առանց ուղեգրի:
  - Արագորեն ստանալու Ձեր ապահովագրված ծառայություններն ու դեղերը:
  - Իմանալու բուժման բոլոր ընտրանքները՝ ինչքան էլ դրանք արժեն և ապահովագրված լինեն թե ոչ:
  - Մերժելու բուժումը, նույնիսկ եթե Ձեր բժիշկը հակառակ խորհուրդ տա:
  - Դադարեցնելու դեղի ընդունումը:

**Հարցեր ունենալու դեպքում,** խնդրում ենք զանգահարել Health Net Cal MediConnect՝ 1-855-464-3571 (TTY՝ 711) համարով կ.ա. 8-ից կ.հ. 8-ը, երկուշաբթիից ուրբաթ: Աշխատանքային ժամերից հետո, շաբաթավերջերին և տոնական օրերին կարող եք պատգամ թողնել: Ձեր հեռախոսազանգին կպատասխանենք հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում: **Հավելյալ տեղեկության համար** այցելեք www.healthnet.com/calmediconnect կայքը:

- Խնդրելու երկրորդ տեսակետ: Health Net Cal MediConnect-ը կվճարի Ձեր երկրորդ տեսակետի այցի ծախսը:
- Ստեղծելու և կիրառելու մի նախօրոք հրահանգ, ինչպես՝ կտակը կամ առողջական խնամքի փոխանորդագիրը:

- **Իրավունք ունեք ճիշտ ժամանակին ձեռք բերելու խնամք, որը չի ներկայացնում որևէ հաղորդակցական կամ ֆիզիկական մուտքի արգելք:** Սա ընդգրկում է իրավունքը՝
  - Բժշկական խնամքը ժամանակին ստանալու:
  - Առողջական խնամքի մատակարարի գրասենյակը մուտք ու ելք անելու: Սա նշանակում է անարգել մուտք հաշմանդամ անձանց համար, համաձայն Հաշմանդամ ամերիկացիների մասին օրենքի (Americans with Disabilities Act):
  - Բանավոր թարգմանիչների օգնությունն ստանալու, որպեսզի հաղորդակցվեք Ձեր բժշկի և Ձեր առողջապահական ծրագրի հետ: Զանգահարեք 1-855- 464-3571 (TTY՝ 711) համարով, երկուշաբթիից ուրբաթ, կ.ա 8:00-ից կ.հ. 8:00-ը, եթե օգնության կարիք ունեք այս ծառայության կապակցությամբ:

- **Իրավունք ունեք արտակարգ իրավիճակի և հրատապ խնամք խնդրելու երբ որ դրա կարիքն ունենաք:** Սա նշանակում է, որ իրավունք ունեք
  - Արտակարգ իրավիճակի ծառայություններ ստանալու օրը 24 ժամ, շաբաթը յոթ օր, առանց արտակարգ իրավիճակի դեպքում նախօրոք վավերացման:
  - Անհրաժեշտության դեպքում այցելելու արտացանցային հրատապ կամ արտակարգ իրավիճակի խնամքի մատակարարի:

- **Իրավունք ունեք խորհրդապահության և գաղտնիության:** Սա ընդգրկում է իրավունքը
  - Խնդրելու և ստանալու պատճենը Ձեր բժշկական արձանագրությունների այնպիսի եղանակով, որը կարողանաք հասկանալ, ինչպես նաև խնդրելու, որ Ձեր արձանագրությունները փոխվեն կամ ուղղվեն:
  - Ձեր անձնական առողջական տեղեկությունները գաղտնի պահել տալու:

- **Իրավունք ունեք գանգատներ ներկայացնելու Ձեր ապահովագրված ծառայությունների կամ խնամքի վերաբերյալ:** Սա ընդգրկում է իրավունքը՝
  - Գանգատ կամ բողոք ներկայացնելու մեր կամ մեր մատակարարների դեմ: Դուք նաև ունեք մեր կամ մեր մատակարարների կողմից կայացված որոշ որոշումներ բողոքարկելու իրավունք:
  - Կալիֆորնիայի Ղեկավարվող առողջական խնամքի բաժանմունքից (California Department of Managed Health Care) Անկախ բժշկական վերանայում (Independent Medical Review) խնդրելու Medi-Cal-ի ծառայությունների կամ իրերի վերաբերյալ, որոնք ունեն բժշկական բնույթ:
  - Նահանգային արդար լսում խնդրելու Կալիֆորնիա նահանգից:
  - Մանրամասն պատճառաբանություն ստանալու, թե ծառայություններն ինչու են մերժվել:

Ձեր իրավունքների վերաբերյալ հավելյալ տեղեկության համար կարող եք ընթերցել Health Net Cal MediConnect-ի *Անդամի տեղեկագիրքը*: Եթե հարցեր ունեք, կարող եք նաև զանգահարել Health Net Cal MediConnect-ի Անդամների սպասարկում:

**?** **Հարցեր ունենալու դեպքում,** խնդրում ենք զանգահարել Health Net Cal MediConnect՝ 1-855-464-3571 (TTY՝ 711) համարով կ.ա. 8-ից կ.հ. 8-ը, երկուշաբթիից ուրբաթ: Աշխատանքային ժամերից հետո, շաբաթավերջերին և տոնական օրերին կարող եք պատգամ թողնել: Ձեր հեռախոսազանգին կպատասխանենք հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում: **Հավելյալ տեղեկության համար** այցելեք www.healthnet.com/calmediconnect կայքը:

## Եթե զանգատ ունեք կամ կարծում եք, որ պարտավոր էինք ապահովագրել մի բան, որը մերժել ենք

Եթե զանգատ ունեք կամ կարծում եք, որ Health Net Cal MediConnect-ը պարտավոր է ապահովագրել մի բան, որը մերժել ենք, զանգահարեք Health Net Cal MediConnect 1-855-464-3571 (TTY՝ 711) համարով կ.ա. 8-ից կ.հ. 8-ը, երկուշաբթիից ուրբաթ: Աշխատանքային ժամերից հետո, շաբաթավերջերին և տոնական օրերին կարող եք պատգամ թողնել: Մենք Ձեր հեռախոսազանգին կպատասխանենք հաջորդ աշխատանքային օրը: Հեռախոսազանգն անվճար է: Թերևս կարողանաք բողոքարկել մեր որոշումը:

Գանգատների և բողոքարկումների վերաբերյալ հարցերի համար կարող եք ընթերցել Health Net Cal MediConnect-ի *Անդամի տեղեկագրքի* 9-րդ Գլուխը: Կարող եք նաև զանգահարել Health Net Cal MediConnect-ի Անդամների սպասարկում:

Եթե ունեք Ձեր նպաստներին կամ խնամքին վերաբերող մի խնդիր, մտահոգություն կամ հարց, զանգահարեք Health Net Cal MediConnect-ի Անդամների սպասարկում 1-855-464-3571 (TTY՝ 711) համարով կ.ա. 8-ից կ.հ. 8-ը, երկուշաբթիից ուրբաթ: Աշխատանքային ժամերից հետո, շաբաթավերջերին և տոնական օրերին կարող եք պատգամ թողնել: Մենք Ձեր հեռախոսազանգին կպատասխանենք հաջորդ աշխատանքային օրը: Հեռախոսազանգն անվճար է:

## Եթե կասկածում եք խարդախության մասին

Ծառայություններ մատուցող առողջական խնամքի մասնագետների և կազմակերպությունների մեծ մասը պարկեշտ է: Դժբախտաբար, կարող են գտնվել անպարկեշտ անձինք:

Եթե գտնում եք, որ մի բժիշկ, հիվանդանոց կամ այլ դեղատուն անում է մի սխալ բան, խնդրում ենք կապ հաստատել մեզ:

- Զանգահարեք Health Net Cal MediConnect-ի Անդամների սպասարկում: Հեռախոսահամարները կարող եք գտնել այս ամփոփման կազմի վրա:
- Կամ զանագահարեք Medicare՝ 1-800-MEDICARE (1-800-633-4227) համարով: TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն 1-877-486-2048 համարով: Այս համարներով կարող եք անվճար զանգահարել օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:
- Կալիֆորնիայի Առողջական Խնամքի Սպասարկման Բաժնի (California Department of Health Care Services) Խարդախության և չարաշահման թեժ հեռախոսագիծ (Fraud & Abuse Hotline)՝ 1-800-822-6222 կամ Արդարադատության նախարարության Գլխավոր դատախազի գրասենյակի Medi-Cal-ի խարդախության և տարեցների չարաշահման բաժանմունք (Department of Justice Office of the Attorney General Bureau of Medi-Cal Fraud & Elder Abuse)՝ 1-800-722-0432: Ձեր հեռախոսազանգն անվճար և գաղտնի է:

## Ոչ-խտրականության ծանուցագիր

- Health Net Community Solutions, Inc.-ը (Health Net-ի Cal MediConnect-ը (Medicare-Medicaid Plan) հարգում է դաշնային քաղաքացիական իրավունքների կիրառելի օրենքները և խտրականություն չի գործադրում ցեղի, գույնի, ազգային ծագման, տարիքի, հաշմանդամության կամ սեռի հիմքի վրա: Health Net-ի Cal MediConnect-ը չի բացառում անձանց կամ նրանց հետ տարբեր կերպ չի վարվում ցեղի, գույնի, ազգային ծագման, տարիքի, հաշմանդամության կամ սեռի պատճառով:

Health Net Cal MediConnect-ը՝

- Անվճար օգնություններ և ծառայություններ է մատուցում հաշմանդամներին , որպեսզի արդյունավորապես հաղորդակցեն մեզ հետ, ինչպես  խուլհամրերի որակյալ թարգմանիչներ և տարբեր ձևաչափերով գրավոր տեղեկություն (խոշոր տառեր, մատչելի էլեկտրոնային ձևաչափեր, ուրիշ ձևաչափեր):
- Անվճար լեզվական ծառայություններ է մատուցում անձանց, որոնց առաջնային լեզուն անգլերենը չէ, ինչպես՝ որակյալ բանավոր թարգմանիչներ և ուրիշ լեզուներով գրված տեղեկություն:

Այս ծառայությունները Ձեզ հարկավոր լինելու դեպքում, կապ հաստատեք Health Net Cal MediConnect-ի Հաճախորդի կապի կենտրոնի հետ 1- 855-464-3571 (TTY  711) համարով երկուշաբթիից ուրբաթ, կ.ա. 8:00-ից կ.հ. 8:00-ը: Աշխատանքային ժամերից հետո, շաբաթավերջերին և տոնական օրերին կարող եք պատգամ թողնել: Մենք Ձեր հեռախոսազանգին կպատասխանենք հաջորդ աշխատանքային օրը: Հեռախոսազանգն անվճար է:

Եթե զտնում եք, որ Health Net Cal MediConnect-ին չի հաջողվել այս ծառայությունները մատուցել, կամ խտրականություն է գործադրել մի ուրիշ ճանապարհով՝ ցեղի, գույնի, ազգային ծագման, տարիքի, հաշմանդամության կամ սեռի հիմքի վրա, կարող եք բողոքարկել զանգահարելով վերևի համարով և նրանց ասելով, որ Ձեզ օգնություն է հարկավոր բողոքարկումը կատարելու համար. Health Net Cal MediConnect-ի Հաճախորդի կապի կենտրոնը տրամադրելի է Ձեզ օգնելու համար:

Կարող եք նաև քաղաքացիական իրավունքների էլեկտրոնային զանգատ ներկայացնել ԱՄՆ Առողջապահության և մարդու ծառայությունների բաժանմունքի (Department of Health and Human Services) Քաղաքացիական իրավունքների գրասենյակի (Office for Civil Rights) մոտ Քաղաքացիական իրավունքների գրասենյակի զանգատների կայքամուտքի միջոցով՝ **https://ocrportal.hhs.gov/ocr/portal/lobby.jsf**, կամ փոստի կամ հեռախոսի միջոցով՝ U.S. Department of Health and Human Services, 200 Independence Avenue SW., Room 509F, HHH Building, Washington, DC 20201, 1-800-368-1019, (TDD' 1-800-537-7697) համարով: Գանգատի ձևաթղթերն առկա են **http://www.hhs.gov/ocr/office/file/index.html** կայքում:

? **Հարցեր ունենալու դեպքում,** խնդրում ենք զանգահարել Health Net Cal MediConnect՝ 1-855-464-3571 (TTY՝ 711) համարով կ.ա. 8-ից կ.հ. 8-ը, երկուշաբթիից ուրբաթ: Աշխատանքային ժամերից հետո, շաբաթավերջերին և տոնական օրերին կարող եք պատգամ թողնել: Ձեր հեռախոսազանգին կպատասխանենք հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում: **Հավելյալ տեղեկության համար** այցելեք www.healthnet.com/calmediconnect կայքը:

Health Net Community Solutions, Inc.-ը դուստր ձեռնարկությունն է Health Net, Inc.-ի: Health Net-ը գրանցված առևտրանիշն է Health Net, Inc.-ի: Բոլոր իրավունքները վերապահված: